

- 68 *Ձի եթէ դու բարունեսցես  
Ի՛ ի Բիւզանդիա պատիւ գրտցես  
Եկից անդէն իսկոյն եւ ես  
Առ ի զրկել անտի Ղքեղ :*
- 69 *Ի գալն ապա անդրը նորա  
Օթեալ ի տան Տեառն Յակոբայ,  
Չուր խրրոխտայր միշտ ի վերայ  
Սարգսի մերոյ զերթ գերակայ :*
- 70 *Ձի Սարգիս միշտ ծիծաղելով  
Չով գոլն որոյ ճանաչելով  
Չինքն եւ բանն իւր եպերելով  
Ի սընտախ դասէր մեղմով :*
- 71 *Յայն ըզչարեալ Սահակ բարուն  
Ճըչէր գոռայր բայց անարդիւն,  
Ձի անարդար էր նոյն գոչիւն,  
Եւ յանցաւորն էր իւր լեզուն :*
- 72 *Թէպէտ Յակոբ էր այնց ատօղ,  
Այլ ըստ տեղւոյն էր եւս խորհօղ .  
Ձի խոհեմն էր եւ խափանօղ  
Յայտ մաքառման որ չէր շինօղ :*
- 73 *Ուստի երկուցն իսկ լեալ խրատու  
Բայց ահագնի սաստ ահարկու  
Չոր հարկ էր գոլ խորհրդածու  
Յոչ սայթաքեալ ըզմեր ածու :*
- 74 *Այսուիկ Սահակ յոյժ հանդարտէր,  
Առ ի հաշտիլ իսկոյն գիմէր,  
Մոռանալով զիւր գործ անսէր  
Անդրէն դարձեալ զ՝Սարգիս սիրէր :*